

պատկերացնեմ ես. նախնական կրթութիւնն ու սեփական գրականութիւնը պէտք է աւանդուին տեղական լեզուով: Միջնակարգ վարժարաններու մէջ պէտք է ուսուցուի ընդհանուր քրքր-քերէնը: Կարելի է նոյն իսկ մէկ երկու ատարկայ աւանդել այս լեզուով: Աւելի բարձր եւ ամենաբարձր կրթական հաստատութիւններուն մէջ դասախօսութիւնները պիտի ըլլան միայն ընդհանուր քրքրէնով: Այս կերպով կարելի կ'ըլլայ առանց յատուկ ճշում քանեցնելու, ձեռք բերել թուրք անգիր դպրութեանց ցանկացուած ձուլումը»:

«Բոլոր ազգային-կուլտուրական շահերուն համար մենք պէտք է հիմնենք ազգային խորհուրդ մը:

«Ասկէ գտտ, մահմետականներու կրօնական պէտքերուն համար, մենք կրնանք նաեւ կրօնական հորհուրդ մը կեանքի կոչել»:

Վերջացնելէ առաջ Բասուլզադէ համազումարին կը հաղորդէ «Կովկասի Մահմետականներու առաջին Քօնգրէին» (գումարուած նոյն տարուոյ Ապրիլին Բազուլի մէջ) քուէարկած հետեւեալ որոշումները. —

«Ա. Կովկասեան Մահմետականներու համազումարը, Ռուսաստանի մահմետականներուն ազգային-քաղաքական շահերու հարցով ղրտղելով, եկած է այն որոշման որ Ռուսաստանը պէտք է կառավարուի ազգերու հանրապետութեան մը միջոցով որ հաստատուած ըլլայ երկրային ինքնավարութեան հիման վրայ:

«Բ. Որովհետեւ Ռուսաստանի մահմետականները իրարու կապուած են կրօնական եւ կուլտուրական սերտ կապով, համագումարը հրամայական կը համարէ համամահմետական կառավարութեան մը ստեղծումը, որ Ռուսաստանի մահմետականութեան համար սեննայ օրէնսդրական իրաւասութիւն»:

Համազումարի վերջին նստին, երբ վերջին անգամը կը պաշտպանէր իր առաջարկը, Բասուլզադէ պատասխանելով անոնց, որ կ'ըսէին «Վստահինք մեծ Քերենսկիի խղճամտութեան, թողունք մեր ճակատագիրը ռուսական զեմոկրատիայի ձեռքերուն մէջ», կ'ըսէ. —

«Ես ալ մեծ յարգանք կը տածեմ Քերենսկիին հանդէպ . . . Բայց հակառակ ամէն բանի ես պէտք է ձեզի ըսեմ. վստահինք Քերենսկիին,

բայց ամէն բանէ առաջ, վստահինք Թրքօթաթար ժողովուրդի խղճին! (ծափեր): Տիկիներ եւ պարոններ, այն ժողովուրդը, որ ինքն իր ոյժին վրայ հաւատք չունի, ապագայ չունի»:

Եւ դառնալով Յալիքովին Բասուլզադէ կը վերջացնէ. —

«Այնպիսի ինքնավարութիւն մը, որպիսին Յալիքով կ'առաջարկէ, կրնայ նկատուիլ թեան առնուիլ միայն Հրեաներուն համար, որ ո՛չ երկիր ունին, ո՛չ հայրենիք: Փառք Աստուծոյ մենք հող ալ ունինք, հայրենիք ալ . . .» (վոթորկալի ծափեր):

Ձախշախիչ մեծամասնութեամբ կ'ընդունուի Ազրբէյջանի քաղաքագէտին տեսակէտը:

* * *

Իր նպատակները հետապնդելու համար Մոսկուայի համառուսական Մահմետական Համազումարը ստեղծեց նոր մարմին մը — «Մահմ. կեդր. հորհուրդը», որ կը ստորաբաժանուէր ըստ ժողովուրդներու (եռեսուն անդամներ հետեւեալ համեմատութեամբ՝ հիւսիսային Թաթարական խումբ 10, Քըրզըզներ 6, Կովկաս 5, Թուրքիստան 7 եւ Խըիմ 2 (Տե՛ս Der Neue Orient Band I, Heft 8, Juli 1917) եւ անոր տուաւ իրրեւ բնակարան՝ Բուխարայի էմիրին Փեթերսբուրգի պալատը: Էմիրը այս անթիւ իր պալատը նուիրեց Խալամութեան:

Իրական ոյժի մը վրայ կոթնելու համար Համազումարը որոշեց իսլամական գորտմատներու մէջ կազմակերպել Ռուս բանակին մէջ գտնուող մահմետական զինուորները, որոնց թիւը կը հասնէր մէկ միլիոնի (տես D. N. O. Juli 23, 1917) եւ այս գործը ի զլուխ հանելու ու մահմետական-ազգային զորամասերու իբր վերին հրամանատարութիւն՝ ստեղծեց Համառուսական Մահմետական Զինուորական հորհուրդը, որուն կեդրոնատեղին պիտի ըլլար Քազանը:

Քազանի մէջ արդէն (27-30 ապրիլ) տեղի ունեցած էր առաջին ղինուորական համազումար մը եւ այն՝ հակառակ Քերենսկիի կառավարութեան բացայայտ արգելքին: Այս համազումարը ի միջի այլոց պահանջեր էր, որ առաջիկայ Խաղաղութեան Համաժողովին մէջ Ռու-